Զարուհի Օրբելյան

Հարգելի ներկաներ՝ Պրոֆեսիոնալ Զբոսավարների Հայկական Ասոցիացիան իր ակտիվ գործունեությունը սկսել է սույն թվականի փետրվաար ամսից: Մեր կազմակերպության ստեղծման նպատակները բազմազան են՝ զբոսավարների իրավունքների և պարտականությունների հստակեցում, որակավորման բարձրացմանը սպաստող դասախոսությունների կազմակերպում: Այդ նպատակների թվում են նաև՝ բնության և պատմամշակութային հուշարձանների պահպանությունը:

Հաշվի առնելով, որ մեր ասոցիացիան նորաստեղծ է, այդ նպտակների իրականացմանն ուղղված մեր անելիքները դեռ շատ են: Ես կներկայցնեմ ձեզ արդեն կատարված և վաղ ապագայում կատարվելիք աշխատանքները:

Մեզ չի կարող չմտահոգել անտեսված և երբեմն անմիխիթար վիճակում գտնվող պատմական և բնական հուշարձանների ապագան և ներկան: Մենք ամեն գնով պետք է պահպանենք և հաջորդ սերնդին փոխանցենք այդ հսկայական ժառանգությունը: Այդ ուղղությամբ մեր արված աշժատանքներն են՝ դիմել ենք Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարան՝ Տիգրան Մեծ զբոսայգում 5000 տարվա պատմություն ունեցող ժայռապատկերների պահպանության հարցով: Թաղապետարանից ստացել ենք դրական արձագանք, այժմ դիմումը փոխանցվել է քաղաքապետարան: Խոչընդոտել ենք Ազատի կիրճում բնապահպանության գոտում սրճարանի կառուցմանը: Մոտ ապագայում պատրաստվում ենք բարձրաձայնել Ավանի խաչքաչերի և Հայաստանի ամենահին՝ Կատրանիդեի խաչքարի պահպանման հարցը:

Քաջ գիտակցելով. որ զբոսաշրության ոլորտի զարգացմանը խոչընդոտող խնդիրները շատ են այնուամենայնիվ առավել արդյունավետության հասնելու համար մեր ասոցիացին որոշում կայացրեց գերակա խնդիր դիտարկել համատարած աղբի անմխիթար վիճակը: Սարսափելի և ցավալի է գիտակցել որ մեր երկիրը ունի իր նմանը չունեցող հարուստ պատմամշակույթային ժառանգություն, սակայն առաջինը ինչը գրավում է զբոսաշրիկի ուշադրությունը և զարմանք է առաացնում՝ ամենուրեք թափված աղբակույտերն են: Անհնարին է շրագայել Հայաստանով և հանդիպել նույնիսկ 100 մետր մաքուր տարածք: Համատարած աղբը իսպառ ջնջում է բոլոր լավ տպավորությունները և հարգանքը մեր երկրի հանդեպ:

Այս խնդրի լուծման ուղղությամբ մեր աասոցիացիան մի շարք քայլեր է ձեռնարկել: Սույն թվականի մարտի 17ին և 24ին կազմակերպել ենք շաբաթորյկներ Ազատի կիրճում, Չարենցի կամարի շուրջ, Ողջաբերդ-Հացավանի խաչմերուկ ճանապարհահատվածում: Ցավով պետք է նշեմ, որ այսօր նշված վայրերում աղբի կուտակումները նորից առավա քանակին են հասել: Այնուամենայնիվ մեր շաբաթորյակների արդյունքում հավաքեցինք մոտ 300 պարկ աղբ (4 բեռնատար):

Բացի անցկացված շաբաթորյակներից աղբի խնդիրը բարձրաձայնել ենք նաև տարբեր հարթակներից, հյուրընկալվել ենք Հ1-ի, Սիվիլնեթի, Հանրային ռադիոի, Ռադիո Ավրորայի կողմից, մեր հարցազրույցները հրապարակվել են hetq.am և jam.news կայքերում:

Փորձել ենք կյանքի կոչել պայքարի այլ ձևաչափ՝ նկարում ենք աղտոտված վայրերը, ահազանգում ենք համապատասխան ատյաններին (թաղապետարան, մարզպետարան, տրանսպորտի նախարարություն), սակայն ապարդյուն: Նշված ատյանների պատասխանները եղել են շատ բարիացակամ, բայց արդյունավետությունը՝ զրոյական: Արձագանքի չի արժանցել և ոչ մի ահազանգ:

Անմիջական շփման մեջ լինելով զբոսաշրիկի հետ մենք՝ զբոսավարներս հանդիսանում ենք մեր երկրի դեսպանների: Այդ ամնիջական շփումը մեզ հնարավորություն տվեց նաև ծանոթանալ մի շատ հետաքրքիր ծրագրի հետ: Վերջերս մասնավոր այցով մեր երկիր շրջագայության էր ժամանել շվեյցարական Swisscontact հիմադրամի ներկայացուցիչներից մեկը: Այդ հիմնադրամը մեծ աշխատանքային փորձ ունի աշխարհի տարբեր երկրներում: Հիմնադրամի հիմնական գործունեությունը կայանում է աղբազերծման, աղբի վերամշակման ծրագրերի իրականացումը: Մենք այդ հիմնադրամի հետ միասին արդեն իսկ մշակում ենք ծրագրեր, որոնք և շատ մոտ ապագայում պատրաստվում ենք ներկայացնել կառավարությանը:

Աղբի դեմ պայքաչում շատ ենք կարևորում նաև կրթությունը և քարոզչությունը: Եթե երեխան փոքրուց սովորի չաղտոտել, Եթե մեզանից յուրաքանչյուրը անտարբեր չանցնի աղբ թափոցի կողքով, այլ դիտողություն անի նրան, ապա մենք շուտով կունենանք մաքուր երկիր և առանց ամաչելու կկարողանանք ներկայացնել այն արտասահմանցի զբոսաշրիկներին: